

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԻՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԼԵՐԸ

Ա. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Հայոց եկեղեցու հիմնական ծիսական մատյաններից է Ծիսարան-Մաշտոցը: Պատարագամատուցի, ժամագրքի, ճաշոցի և այլ մատյանների կողքին նրա գրաված տեղը առանձնահատուկ է, որովհետև նրանում նկարագրված ծեսերը նախատեսված են նաև եկեղեցուց դուրս կատարելու համար:

«Մաշտոց» ժողովածուն հատկանշվում է քրիստոնեական ու հեթանոսական ծեսերի յուրօրինակ զուգորդումով: Ժողովածուի վերջնական կանոնական տարբերակի ձևավորման գործում իրենց ավանդն ունեն հայ մշակույթի նշանավոր գործիչներ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Հովհան Մանուկյանը, Մաշտոց Եղիվարդեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ: Մատյանի մեջ են մտել Բարսեղ Կեսարացու, Եփրեմ Ասորու, Գրիգոր Աստվածաբանի, Ելուրեղ Երուսաղեմացու և այլոց աղոթքների, քարոզների և կանոնների լուսավորչությունները: Ըստ ընդգրկած ծավալի կան երկու Մաշտոցներ. Մեծ «Մաշտոց» (անվանում են նաև Հայր, Մայր, բուն «Մաշտոց») և Փոքր «Մաշտոց» (կամ «Զեռաց Մաշտոց»): Միջնադարում առանձին ծիսական մատյաններ էին նաև «Գիրք ձեռնադրության», «Սահմանադրություն դաստիարակության նորահաս մանկանց եկեղեցուց» և «Գիրք քահանայաթաղի»: Այդ մատյանները հաճախ են հանդիպում որպես Մեծ կամ Փոքր «Մաշտոցի» բաղադրիչ մասեր:

Տվյալ հոդվածը վերաբերում է «Զեռաց Մաշտոցին», որ առավել տարածված էր ժողովրդի կենցաղում և առավել յուրատիպ՝ իր սոցիալական ֆունկցիայի առումով: Ինչպես հայտնի է, «Զեռաց Մաշտոցում» առկա են ծեսեր, որոնք ծագելով հնագույն ժամանակներում՝ մշտապես ունեցել են իրենց երաժշտա-գեղարվեստական ձևավորումը: Քրիստոնեական համայնքի կյանքին սերտորեն կապված այդ ծեսերը լույս են սփռում ժողովրդի մեջ առ այսօր ապրող շատ սովորությունների վրա: Ժողովածուն ունի կանոնների մի քանի խումբ. ա) մարդկային կյանքի հիմնական պահերին նվիրված ծեսեր՝ Ծնունդ-Մկրտություն, Հասունություն-Պսակ, Մահ-Թաղում. բ) տարեցույցի տոների հետ կապված ծեսեր՝ սերմ, շեղջ, կալ, հնձան, խաղող օրհնելու կանոնները, աղոթք երաշտի դեմ և այլն. գ) տան, ջրի, աղի, օջախի, մատաղի օրհնություններ. դ) ծեսեր, որ թվում են զուտ եկեղեցական, սակայն կարևոր են նաև հասարակական առումով՝ նորաշեն եկեղեցու, նկարների, գրքերի և այլնի օրհնություններ. ե) հոգևոր աստիճանների ձեռնադրություններ՝ ամենացածրից մինչև քահանան (ձեռնադրության ավելի բարձր աստիճանները պարունակվում են Մեծ Մաշտոցի մեջ):

Մեր վերջնական նպատակն է՝ լուսաբանել Մաշտոց ժողովածուի կարևոր և անքակտելի բաղադրամասը կազմող երաժշտական նյութը, որը գրեթե ուսումնասիրված չէ: Այս հոդվածում, սակայն, անհրաժեշտ ենք համարում թեկուզ ընդհանուր գծերով հետևել նրա ձևավորման ու զարգացման հիմնական փուլերին:

Հայոց Ծիսարանի կազմավորման ու զարգացման հարցը գրավել է գիտնականներին մինչև այսօր թերևս բոլորից շատ: Տվյալ ժողովածուի պատմության որոշ չլուծված հարցեր և «Մաշտոց» անվանումը բաղում ուսումնասիրողների՝ պատմաբանների, բանասերների, լեզվաբանների հետաքրքրությունն է գրգռել՝ ստիպելով պատմականորեն հավաստի տեղեկություններ փնտրել այդ անվան և ժողովածուի կազմավորման ժամանակագրության վերաբերյալ, ինչպես նաև որոնել արդեն հայտնի տեղեկությունների գիտական հիմնավորման նոր ուղիներ: Այդ հարցին ուշադրություն են հատկացրել Ն. Ադունցը, Դ. Ալիշանը, Գ. Ֆնտկյանը, Մ. Ավգերյանը, Հ. Աճառյանը, Ա. Մնացականյանը,

ն. Թահմիդյանը և ուրիշները Հայոց Միսարանին նվիրված առանձին բնագրագիտական ուսումնասիրության հեղինակ է հայտնի անգլիացի հայագետ Ֆր-կոնիբերը¹։ Առանձնապես գնահատելի է Մխիթարյանների վեներիկյան հավաքածուի գրչագիր Մաշտոցների նկարագրման՝ Բարսեղ Սարգիսյանի կատարած արժեքավոր աշխատանքը, որն ամփոփված է վեներիկյան ձեռագրացուցակի 3-րդ հատորում։

Դեռևս վերջնականապես պարզ չէ, թե որ Մաշտոցի անվան հետ պետք է կապել ժողովածուի անվանումը՝ հայոց գրերի ստեղծողի, թե՞ կաթողիկոս Մաշտոց Նղիվարդեցու։ Հարցը պարզելու համար անհրաժեշտ է նախ և առաջ սահմանադատել տվյալ ժողովածուի զարգացման փուլերը։ Տարբեր ժամանակաշրջաններում ապրած երկու Մաշտոցների մասին գոյություն ունեցող տեղեկությունները, անկասկած, այդ խնդրի լուսաբանման մեջ որոշ տարածանությունների առիթ հանդիսացան։ Հայոց գրերի ստեղծող Մաշտոցին մատնացույց անող բազմաթիվ ձեռագրերի հիշատակարանները և Միսարանի կանոնների հեղինակների անանուն ցուցակը, ամենայն հավանականությամբ, անհիմն չեն։ Ինչպես հայտնի է, այբուբենի ստեղծումից և թարգմանական եռանդուն գործունեությունից բացի Մաշտոցն ու Սահակ Պարթևը իրենց աշակերտների օգնությամբ անմիջական մասնակցություն բերեցին ծիսակատարության կարգավորմանը և հարստացմանը, որը մինչ այդ տարվում էր հունարեն կամ ասորերեն լեզուներով։ Մասնագրական և մշակութային ժառանգության հայացման լայն թափը V դարում մեկնաբանական, ջատագովական, հայրաբանական, պատմական և վկայաբանական գրականության հետ մեկտեղ ընդգրկել էր նաև կանոնագրությունը և պաշտոններգությունը։ Դեռևս V դարի 20—30-ական թթ. հայերեն թարգմանվեցին Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Եփրեմ Ասորու և վաղ քրիստոնեական սչքի ընկնող այլ հեղինակների աղոթքներն ու քարոզները, կցուրդները և հոգևոր երգերը։ Դրանցից շատերը մտան Միսարանի մեջ։ Այլ հարց է, որ մեղ չեն հասել վաղ միջնադարի ծիսարանները։ Սակայն հնարավոր է, որ այդ գրքի մեջ հետագայում ընդգրկված տարբեր կանոնները կենցաղավարել են Հայաստանում անջատ վիճակում կամ՝ կցվել Պատարագամատուցին, Տոնացույցին, Շարակնոցին և ուրիշ ժողովածուներին։ Ավելին, որոշ վկայությունները թույլ են տալիս ենթադրելու, որ արդեն IV դարում Հայաստանում, Գրիգոր Լուսավորչի օրոք, կենցաղավարում էր ծիսակատարության որոշակի օրինականացված համակարգ, որը հետագայում վերանայվեց Սահակ Պարթևի ժամանակ։

Այդ տեսակետից ուշագրավ հուշարձան է Միսարանին կցվող օրհնությունաբեր ցուցակի կարգավորությունը, որը բազմիցս դիտարկվել է հայագիտական գրականության մեջ²։ Այդ ցուցակը սովորաբար կցվել է մեծ «Մաշտոցներին»։ «Կարգաւորութիւն ցուցման արհնութիւնաբեր ցուցակիս, թէ ո՞վ ոք, կամ ուստի, կամ յորում ժամանակի, և յո՞ր աղգէ կամ ի քաղաքէ, եւ ո՞վ ոք ի սրբոցն արարեալ է ի կարգաց օրհնութեանցս այսոցիկ. եթէ ո՞վ եբեր ի հայս կամ որում հրամանաւ՝ ճառեցից»։

Երանելուն Մովսէսի³, թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Սահակայ հայրապետի հայոց, որդոյն Ներսէսի, յետ ՃԺԱ ամի սրբոյն Գրիգորի եզն սկիզբն թարգմանութեան (Աստուածաշնչի) հայոց լեզուի։ Յերկրորդ ամի թարգմանութեան առաքեաց սբն. Սահակ Յագիագան քաղաք և ետ բերել զսերմարհնեքն,

¹ Fr. Conybear. *Rituale armenorum*. Oxford, 1905.

² Տե՛ս, օրինակ, Գ. Զարբհանալյան. Հայ հին դպրություն. Վենետիկ, 1897։ Նույնի՝ Հայկական թարգմանությունք նախնյաց. Վենետիկ, 1889։ Fr. Conybear. Նշվ. աշխ.։ Հ. Աճառյան. Հայոց գրերը. Երևան, 1968։ Բ. Սարգիսյան. Մայր ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի վեներիկ. Վենետիկ, Ս. Ղաղար, 1966։

³ Որոշ աղբյուրներում այստեղ՝ «...Երանելին Մովսէս խորենացի, թարգմանիչ, որ էր գրիչ սբ. Սահակայ»։ Տե՛ս, օրինակ, Գ. Զարբհանալյան. Հայ հին դպրություն, էջ 246։ Fr. Conybear. Նշվ. աշխ., էջ XXIX։

զկալի և զհնձանի, զոր արարեալ էր Եւ ամի հայրապետութեան իւրոյ՝ Գրիգորի Աստուածաբանի: Իսկ զջրարհնեքն՝ ի Կապուտկացւոց քաղաքէ, զոր արարեալ էր սրբոյն Բարսղի է ամի իւրոյ հայրապետութեան և զհայրարհնեքն յԵրուսաղէմի զի անդ հանդիպեցաւ և հոսորով թարգմանիչն եբեր ի Հայս, հրամանաւ սրբոյն Սահակայ: Իսկ զԱպաշխարող առնել, և դարձեալ արձակել Կիւրոյի Երուսաղեմացւոյ, արարեալ ի դուռն սրբոյն Սիոնի ի է ամի հայրապետութեան իւրոյ, յորժամ աւուր ընծայեցուցանէր զեղոմայեցիսն աստուծոյ, զոր Ընծակ և Կորեն թարգմանիչն բերին ի Հայս: Իսկ Զմայրարհնեքն՝ արարեալ է սրբոյն Կիպրիանոսի, յորժամ զսուրբն Յուստիանէ մայր արար կանանց հաւատաւորաց: Իսկ Ագապս առնել, որ է Ոգեհանգիստ, և զքահանայաթաղն, արարեալ է տեառն Եփրեմի հորին Ասորւոյ, ի Նիկիոմիգացոց քաղաքին յԲ ամի հայրապետութեան իւրոյ: Եւ Ղազարիկ թարգմանիչ եբեր ի Հայս ի ԺԱ ամի սրբոյն Սահակայ Պարթևի՝ որ էր նախանձախնդիր ամենայն կարգաց եկեղեցւոյ՝ ձեռամբ Մովսէսի գրչի: Իսկ զտէրունականն և զաղարհնեքն արարեալ է երանելոյն Յուստոսի՝ որ շորորոգ եպիսկոպոսն էր Երուսաղէմի յետ առաքելոցն: Իսկ սքեմարկեքն երեք կարգ է. ա. Թէոդորոս եպս. Պամփիլացոց. քաղաքին արարեալ է հրամանով սրբոյն Անտոնի. բ. Թեբայեցոյ Ամոնի սբ. հարն. գ. ի Սկիւթացոյ սբ. լերինն: Իսկ զրակարդացր և կեսսարկաւագի և Հին նկարեալ եկեղեցւոյ, և զնոր արհնել, և նոր դուռն, և զնշխարհս սրբոց ի հանգիստ փոխել՝ այս ամենայն յիշատակ է մեզ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ: Իսկ զքահանայարհնեքն սքն. Սահակ արար ԻԱ ամի եպիսկոպոսութեան իւրում ի նաւասարդի, յիշատակի Կարապետին: Եւ զաշխարհաթաղն ի քաղաքու դաշտին, ի վկայաբանութիւն Հոսիսիմէի յետ ՃԺ ամի, սրբոյն Գրիգորի: Արար սա և զգիշերային քարոզն և զնոցին աղօթսն ի վերայ կանոնացն. ա. Վասն ի վերուստ աղ. տէր տուրջեան և բ. Վասն ի գիշերի. աղ. տէր երկնից: դ. Վասն գտանելոյ. աղ. զոհանամբ. եւ զնոցին փոխն:

Իսկ Հիմնարկեքն, եւ եկեղեցի արհնել, սկի և մաղզման, եւ պղծել տաճարի, կնունք, եւ խաչ, և ժամահար, պսակ և զքառասնորդացն, գ ժամուցն քարոզսն և զաղաթսն, զայս կարգեալ է Յոհան Մանդակունոյ ի փառս Աստուծոյ: Շարագրութիւն կարգաւորութեան սբ. ցուցակիս, զոր մակադրեալ սբ. հարն Մաշտոցի. ի պայծառութիւն սրբոյ եկեղեցոյ և ի պարծանս մանկանց նորին, ի դաստիարակութիւն նոցա և յուսումն. և ի հաստատութիւն հաւատացելոց սբ. երրորդութեան: Այս ամենայն ի հրամանէ սրբոյն Սահակայ Պարթևի ձեռամբ Մովսէսի գրչի, նորոգեցաւ ի Հայք, ի փառս Աստուծոյ⁴: Այս ցուցակի մեկ ուրիշ տարբերակում վերջին վկայութիւնը հնչում է ավելի որոշակի. «Յայսմանէ իմանի, թէ ի ժամանակս սրբոյն Սահակայ և երանելոյն Մաշտոցի, որ նա ինքն է Մեսրոպ և աշակերտաց նոցա՝ մերս թարգմանչաց՝ կարգաւորեցաւ այն Գիրք եկեղեցական օրհնութեանց և կոչեցաւ յանուն սրբոյն Մաշտոցի, այսինքն՝ Մեսրոպայ, Մաշտոց»⁵:

Այսպիսով, տվյալ ցուցակի և ուրիշ աղբյուրների համաձայն, հայոց Միսարանի կազմավորումը իրագործվել է Աստվածաշնչի թարգմանությունը զուգընթաց, քանի որ քրիստոնեական հիմնական ծեսերը, ինչպիսիք են մկրտությունը, հաղորդումը, ապաշխարումը և այլ օրհնությունները, պետք է հնչեին հայերեն լեզվով առաջին հերթին: Նույնը վերաբերում է այդ կանոնների մեջ մտնող սաղմոսներին, կցուրդներին և շարականներին: Զարգանալույսը այդ ցուցակը դիտում է որպես V դարի հուշարձան և դնում է երկրորդ տեղը՝ Աստվածաշնչի թարգմանությունից հետո⁶: Բ. Սարգիսյանը ցուցակն անվանում է հնագույն անանուն հիշատակարան, չկոնկրետացնելով, սակայն, նրա ստեղծման ժամանակը⁷: Միաժամանակ ուրիշ տեղում նա առանձնացնում է մի փոքր

⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 958, էջ 258ա—259ա:

⁵ Մեծ Մաշտոց. Կոստանդնուպոլիս, 1807, էջ 3:

⁶ Տե՛ս Գ. Զարբհանալյան. Հայկական թարգմանությունը նախնյաց, էջ 245—248:

⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց... հ. 3, էջ 10:

հատված, որը հայտնում է. «Ի յերկրորդ ամին սրբ. Սահակայ մինչև յԺԳ ամն նորա կատարեցան (կանոնք) ի փառս Աստուծոյ»⁸։ Թերևս, տեքստը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. ոչ թե՛ «Ի յերկրորդ ամին սրբ. Սահակայ մինչև յԺԳ ամն (հայրապետութեան) նորա կատարեցան (կանոնք)», այլ՝ «Ի յերկրորդ ամին սրբ. Սահակայ մինչև յԺԳ ամն (թարգմանութեանն) նորա կատարեցան (կանոնք) ի փառս Աստուծոյ»։

Պետք է ենթադրել, որ տվյալ ցուցակը (ինչպես և նման բազում վկայություններ) մեզ է հասել ենթարկվելով այլևայլ փոփոխությունների։ Սակայն նրա տարբեր օրինակների համեմատությունը հավաստում է, որ շնայած որոշ տարբերվածքների, նրանք միակերպ են։ Ամենայն հավանականությամբ, Միսարանի կազմի մի մասը ձևավորվել է V դարի առաջին կեսին Սահակի և Մաշտոցի օրոք։ Այնուհետև, ուզում ենք ուշադրություն հրավիրել կաթողիկոս Հովհան Մանդակունու գործունեության վրա՝ կապված ծիսակատարության կարգավորման հետ ընդհանրապես և Միսարանի կարգավորման հետ՝ մասնավորապես։ X—XI դդ. պատմագիրները Մանդակունու մասին գրում են. «Երանելին Յովհան Մանդակունի... զՀայոց բազում կարգս ուղղութեան կատարեաց, զքարոզս գիրքի և տուրնչեան, զկարգս մկրտութեան և զսարկաւազի, իբրահանայի և զեպիսկոպոսի, և զօրհնութիւնն եկեղեցոց, և զլիտվիմբ զՊատարագամատոյցն, զոր Աթանասի ասեն լինել»⁹։ «Մանդակունի բազում կարգաւորութիւնս եմոյծ յեկեղեցի, կարդեաց քարոզս աղուհացիցն և զաղօթս նոցա զերրորդ ժամին և զվեցերորդ և զիններորդ, և զեկեղեցւոյն հիմնարկեքն և ժամահարի, սկիհ և զմաղղմային գիրք և բանք, խաչօրհնեք և պսակ»¹⁰։

Այս տվյալներից և օրհնությունաբեր ցուցակի տեղեկություններից դատելով, Հովհան Մանդակունին քիչ բան չի արել ծիսակարգության կատարելագործման ու լրացման գործում, որը, հավանաբար, լիովին բացատրելի պատճառներով Սահակի և Մաշտոցի օրոք մնացել է անավարտ։ Այստեղից կարելի է ենթադրել, որ V դարի երկրորդ կեսին, Մանդակունու օրոք, ավարտվեց Միսարանի կազմավորման ու հայացման առաջին փուլը։ Հայ եկեղեցու պատմության մեծ գիտակ Մ. Օրմանյանը ընդհանրապես գտնում է, որ «Հայաստանեայց եկեղեցոց այժմյան ծիսական կարգերը Մանդակունյան կարգագրություններ կրնան կոչվիլ»¹¹։

Մեզ հայտնի են նաև IX դարի կաթողիկոս Մաշտոց Նղիվարդեցու վերաբերյալ (երբեմն նրան անվանել են նաև Սեանցի) մի քանի պատմական վկայություններ։ Այդ վկայությունները ավանդում են, որ նրա կողմից վերանայվել, լրացվել և մեկ հատորի մեջ են ամփոփվել տարբեր ծիսական կանոնները, որ այդ աշխատանքը հիմնականում ավարտվել է Մաշտոցի մահվան տարում՝ 897-ին, իսկ եկեղեցական ծեսերի ժողովածուն Հայաստանում այդ ժամանակվանից «Մաշտոց» է կոչվել։ Ծիշտ է, Մաշտոց Նղիվարդեցու վարքում, որը գրվել է դեռևս նրա կենդանության օրոք իր աշակերտ Ստեփանոս Սեանցու կողմից, ոչ մի հիշատակություն չկա այն մասին, որ նա զբաղվել է Միսարանի բարեկարգությամբ¹²։ Հ. Աճառյանը դա բացատրում է նրանով, որ վարքը ստեղծվել է մինչև Մաշտոցի կաթողիկոս դառնալը։ Դա լիովին հնարավոր է, որովհետև զոյություն ունեցող աղբյուրների համաձայն, ժողովածուի բարեկարգությունը իրագործվել է նրա հայրապետության շրջանում¹³։

Ահա Կիրակոս Գանձակեցու վկայությունը Մաշտոց կաթողիկոսի մասին. «Սա կարգեաց զգիրսն .որ ըստ իւր անուան Մաշտոց կոչի, ժողովեալ զամե-

⁸ Նույն տեղում. հ. 2, էջ 1136։

⁹ Ստեփանոսի Ասողկան Պատմութիւն տիեզերական. Փարիզ, 1859, էջ 82։

¹⁰ Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 35։

¹¹ Մ. Օրմանյան. Ազգապատում. Կ. Պոլիս, 1912, հ. 1, էջ 478։

¹² Տե՛ս Գ. Հովսեփյան. Հիշատակարանը ձեռագրաց. Անթիլիաս, 1951, էջ 87—98։

¹³ Հ. Աճառյան. Նշվ. աշխ., էջ 321։

նախ կարգեալ աղօթս և զընթերցուածն ի միասին յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեան¹⁴։ Մեկ այլ վկայութիւն կա Հայսմավուրբում, հոկտեմբերի 13-ին. «...լեալ 60 տմաց եղև կաթողիկոս. և եկաց տարի մի յաթոռն հայրապետական և վախճանեցաւ ի գեղաքաղաքն Գառնի։ Եւ եղաւ պատուով մօտ ի հովանոց արքային Տրդատայ, ի բերդն Գառնոյ 382 (897) թուին։

Այս վարդապետ Մաշտոց ընդ բարի վարուց առաքինութեանն իւրոյ, արար և բազում ուղղութիւնս կարգաց և կրօնից եկեղեցոց։ Եւ ժողովեաց զկարգեալսն յառաջին սրբոցն, և զթերին ինքն ելից զաստուածատուր շնորհաց իւրոց, և եդ ի միում տփի։ Զկարգն Մկրտութեան և զՊսակն, զՀաղորդութեան և զԹաղմանն, զՀոգեհոսն և զԽաչօրհնեան, զՍերմօրհնեն և զՀեղջ, զԿալ, և զՀնձան, զՀորս և զԿարաս, զՋրօրհնեն և զՊատնուան, զՀիմնարկէքն և զԵկեղեցի օրհնէքն, զաւագանին և զպղծեալ տաճարին, զձեռնադրութիւնն և զբահանայաթաղն, և զայլ ամենայն, որովք վարին մերս կարգաւորութիւն։ Վասն որոյ և անուն գրոցն Մաշտոց կոչեցաւ, զի նորին աշխատասէր կամօքն ի մի վայր ժողովեցաւ¹⁵։

Կարծես պատասխանելով որոշ գիտնականներին կասկածներին այն հարցում, որ Մաշտոց Եղիվարդեցու կաթողիկոսութեան այդքան կարճատև ժամկետում (ընդամենը 7 ամիս) հնարավոր չէր ավարտել նման լուրջ ձեռնարկումը, Օրմանյանը արդարացիորեն նշում է. «Պետք է ենթադրել, որ Մաշտոցը քանի մը ամսվան կաթողիկոսութեան մեջ այդ գործը գլուխ հանած ըլլա, վասն զի ըրածը հայրապետական իշխանութեան պետք չունէր, այլ պարզապէս զրշութեան և գրագրութեան գործ մըն էր, որուն շատ հարմար կու գար Սեանի առանձնութիւնը, յոր գրական կյանքը և ուսումնական աշխատասիրութիւնը»¹⁶, Այլ կերպ ասած, Միսարանի կարգավորման գործը իր արտացոլումը չի ստացել վարքում, որովհետև չի հրատարակվել այդ ժամանակ։ Գառնալով կաթողիկոս, Մաշտոցը օգտագործում է իր նոր իշխանութեան հեղինակութիւնը և օրինականացված շրջանառութեան մեջ է դնում ժողովածուի տեսք ստացած Միսարանը։

Այսպիսով, ուրվագծվում են Միսարանի կազմավորման հիմնական փուլերը. IV—V դդ.¹⁷ ծիսական կանոնների առաջնային կուտակման, հայացման և դրանց անջատ վիճակում կենցաղավարման շրջանը, V—IX դդ.¹⁸ Մանդակունուց մինչև Եղիվարդեցի ընկած ժամանակաշրջանը, կանոնների հետագա ավելացման և բարեկարգման փուլը և, վերջապէս, IX—X դդ.¹⁹ կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու կողմից իրագործած կանոնների միասնական ժողովածուի ստեղծումը։ Այս տեսակետը փաստորեն հաստատում է նաև Ներսէս Շնորհալու՝ միջազգայնորէն ուղղված թղթի մի հատվածը. «Լուաք դարձեալ՝ զի ոմանք ի մոլար քահանայից զծածկեալ զարշահոտ պղծութիւն անիծելուն Սմբատայ Թոնդրակեցոց վերստին շարժեն ի կործանումն լսողացն ասելով, եթէ եկեղեցի ոչ շինեալ է ի մարդկանէ, այլ մեք միայն և Մաշտոց գիրք և որ ի նմա կարգեալքն են խաչ օրհնել և եկեղեցի և այլք ոչ են ընդունելի։ Իսկ այն, զի ցուցակն ընդունելի, որպէս թէ ոչ ի նախնի հարցն, այլ ի վերջում ժամանակի ի Մաշտոցէ ումեմնէ ասացեալ և եղեալ է, սուտ են և ոչ ճշմարիտ։ Քանզի ոմենայն կարգեալքն ի նմա ի յառաջին հարցն հաստատեալք էին. է որ ի մերոց լուսաւորչացն, է որ յայլոց ազգաց հայրապետաց, որպէս է են իսկ զորոշմնալ

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, ԼՂ 81։

¹⁵ Մեքերեումը ըստ Աճառյանի «Հայոց գրերը» գրքի, էջ 320։ Այս կապակցութեամբ հետաքրքրական է Զարեհանյանի դիտողութիւնը Գոնձակեցու և Հայսմավուրբի կաղնիների մասին, «որոնք թերևս փոխանակ ըսելու, թե ծիսարանին մեջ քանի մը բան կատարեց, կամ քանի մը սաղմոս և աղոթք ավելցուց, որ հավանական կրնա սեպվիլ, կ'ավանդեն թե ինքը եղած ըլլա այն աղոթքները ժողովող և կարգի դնող...» (տե՛ս Գ. Զարեհանյան, Հայ հին դպրութիւն, էջ 510)։

¹⁶ Մ. Օրմանյան, Ազգապատում. հ. 1, էջ 1018։

խորարանչիրոցն անուանք ի սկիզբն ցուցակին: Իսկ երանելին Մաշտոց զբաշանեալ կանոնս ի միմեանց ի մի գիրս հաւաքեաց, վասն որոյ և նոյն գիրք լանուն նորա ասացեալ լինին»¹⁷:

Ինչպես երևում է, «Մաշտոցի» ստեղծման նախապատմությունը հայտնի էր Շնորհալույս և դեռևս այն ժամանակներում դա ընկալվում էր որպես սերունդների հաղորդվող պատմական վկայություն:

«Մաշտոց» ժողովածուի պահպանված առավել հին և եզակի նմուշները պատկանում են IX—X դդ., այսինքն այն շրջանին, երբ Մաշտոց Եղիվարդեցին վերանայել և մի հատորի մեջ է ամփոփել հայոց եկեղեցու ծիսական կանոնները: Մեզ չեն հասել XI—XII դդ. ծիսարանները, սակայն Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է XIII դարի սկզբին պատկանող (1214 թ.) «Մաշտոցի» մի հատված, որը ինչ-որ չափով լույս է սփռում նախորդ դարերի «Մաշտոցների» նկարագրի վրա: Մատենադարանի ֆոնդերում պահվում են նաև XIV դարի 21 գրչագիր «Մաշտոց»: Վերջապես, երրորդ եզրափակիչ շրջանը ընդգրկում է «Մաշտոցների» (այդ թվում նաև Ձեռաց «Մաշտոցների») հիմնական, բավական մեծաքանակ և բազմադան զանգվածը:

Ինչ էր իրենից ներկայացնում ժողովածուն Մաշտոց Եղիվարդեցու բարեկարգումից հետո: Անշուշտ, նրանում տեղ գտան բոլոր ծիսական կանոնների հիմնական խմբերը՝ առավել լրիվ ափսոսով: Ազգային հավաքածուներից ամենահայտնի և հնագույն «Մաշտոցը» X դարով թվագրվող այսպես կոչված վենետիկյան Մեծ «Մաշտոցն» է, որը պարունակում է 47 կանոն: Ձեռագիրը մանրամասնորեն նկարագրված է Բ. Սարգիսյանի ձեռագրացուցակում (հ. Գ, էջ 1—19), ինչպես նաև Ֆ. Կոնիբիբի վերոհիշյալ գրքում (էջ IX—X): Նույն ժամանակաշրջանին է պատկանում Մատենադարանում պահվող Մեծ «Մաշտոցը» (ձեռ. № 1001), որը վերջից թերի է և պարունակում է 30 կանոն: Համեմատելով այդ երկու գրչագրերը, կարելի է նրանց միջև շատ ընդհանուր կետեր նկատել: Երկուսն էլ մեծագիր մատյաններ են, գրված երկաթագրով, որոնք զերծ են նկարներից, խորաններից և զարդագրերից: Բոլորովին զուլժ են նաև խազերից: Երաժշտական նյութը ներկայացված է բազմաթիվ սաղմոսներով, կցորդներով և ընդամենը 2—3 շարականով: Գրիչները սահմանափակվել են դրանց սկզբնատողների կրճատ, թուուցիկ նշումներով: Այդ հանգամանքը տեղիք է տալիս մտածելու, որ տվյալ ժամանակաշրջանում դեռևս բավական սարածված էր այդ երգասացությունների բանավոր կենցաղավարման և փոխանցման մեթոդը: Բացառված չէ նաև, որ սարկավազները և դպրապետերը երկար ժամանակ շարունակել են զուգահեռաբար օգտվել Շարակնոցից կամ ժամագրքից, մինչև որ շարականների խազագրումը ավանդական է դարձել նաև ծիսարանների համար: Չնայած որոշ տարրնթերցվածքների (մի փոքր տարբեր է կանոնների հաջորդականությունը այդ ժողովածուներում), ձեռագրերը կազմված են ըստ նույն սկզբունքի:

Հետաքրքրական է, որ երկու դեպքում էլ հանդիպում ենք երկու շարականի հիշատակության՝ Սեդան Քո Տէր զարուկեանց և Խաչի Քո, Քրիստոս, երկիր պագանեմք (երկուսն էլ՝ Խաչի նաւակատեաց տոնին): Ընդ որում, դրանցից առաջինը հանդես է գալիս մի քանի անգամ տարբեր կանոններում, կարծես ապացուցելով, որ «Մաշտոցի» երաժշտական կազմի նախնական հիմքը եղել է Սաղմոսարանը (պատահական չեն նրանում հանդիպող «Սաղմոս օրհնութեանց նաւակատեաց տաճարին» (ԻԹ) տիպի ցուցումները): Հետզհետե միայն, առանձին միավորներով, նրա մեջ մուտք են գործել շարականները:

Ժողովածուի հետագա ճակատագիրը կապված է զարգացած ֆեոդալիզմի շրջանի հետ: XIII—XIV դդ. սկզբնավորվող Միսարանի աշխարհականացման միտումը խախտում է նրա խիստ կանոնական բնույթը: Հոգևոր տաղերի, գանձերի և ողբերի հետ մեկտեղ «Մաշտոցի» մեջ մուտք են գործում աշխարհիկ բովանդակություն ունեցող նույնանուն երաժշտաբանաստեղծական ստեղծագործություններ:

¹⁷ Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի. Խուղթ ընդհանրական. էջմիածին, 1865, էջ 330—400:

ЭТАПЫ ФОРМИРОВАНИЯ И ЭВОЛЮЦИИ АРМЯНСКОГО ТРЕБНИКА

А. С. АРЕВШАТЯН

(Резюме)

Одним из основных ритуальных канонических сборников армянской церкви является Требник «Маштоц». Положение, занимаемое им рядом со Служебником, Часословом, Апостолом и другими сборниками, особенное, так как обряды, описанные в нем, рассчитаны также на отправление вне церкви, на непосредственный контакт с членами общины в их повседневной жизни. Сборник «Маштоц» обладает богатой историей и примечателен не только своеобразным переплетением христианских и языческих обрядов, но и тем, что на протяжении формирования сборника в окончательный канонический вариант к нему приложили руку многие выдающиеся деятели армянской культуры и науки. В центре нашего внимания в основном—музыкальный материал, составляющий важный и неотъемлемый компонент сборника «Маштоц», но почти совсем не изученный. Прежде чем непосредственно перейти к музыкальному материалу сборника, в настоящей статье мы в общих чертах прослеживаем основные этапы его формирования.

Вопрос формирования и эволюции армянского Требника привлекал ученых до сих пор больше всего. В статье рассматриваются взгляды исследователей, уделивших внимание этому вопросу, разграничиваются этапы эволюции данного сборника. Первый этап (IV—V вв.)—начальное накопление, арменизация ритуальных канонов, осуществленные параллельно с переводом Библии при Сааке Партеве и Месропе Маштоце. Второй этап (V—IX вв.)—дальнейшее расширение и упорядочение Требника (от Ована Мандакуни до Машгоца Егивардеци). Наконец, третий этап (IX—X вв.)—составление единого сборника обрядов католикосом Маштоцем Егивардеци. Дальнейшая судьба сборника связана с эпохой зрелого феодализма, когда зарождающаяся с XIII—XIV вв. тенденция секуляризации Требника разомкнула его строго каноническую форму. Претерпев в течение веков значительную эволюцию, сборник к XIV—XV вв. включал в себя, с одной стороны, псалмы, *кцурды* и *шараканы*, а с другой, в нем наряду с аналогичными духовными песнопениями появились *таги*, *гандзы* и *вохбы* светского содержания.